

ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ
ԱՍՈՒՅԹՆԵՐՈՒՄ

Հոդվածի նպատակը պայմանական ասույթների, որոնք ներակայող (իմպլիկատիվ) ասույթների տարատեսակներից են, վերլուծությունն է գործաբանության տեսանկյունից: Պայմանական ասույթները որպես հետազոտության առարկա ընտրելը պատահական չէ, քանի որ դրանք իրենց մեջ պարփակում են և՛ լեզվաբանական, և՛ տրամաբանական մի շարք կարևոր հիմնահարցեր: Բացի այդ, նշված ասույթները լայնորեն տարածված են լեզվի տարբեր ոճերում, ինչպես նաև մեծ տեղ են զբաղեցնում իրավաբանության, փաստարկման, մաթեմատիկայի, ընդհանրապես, գիտական լեզվում:

Թեպետ որոշ գիտնականներ զբաղվել են պայմանական ասույթների ներակա, մասնավորապես, գործաբանական իմաստների վերլուծությամբ, սակայն նշենք, որ հետազոտողների մեծ մասը սահմանափակվել է «Եթե P, ապա Q» բանաձևով (որն այս ասույթների արտակա իմաստն է արտահայտում) արտացոլված ասույթների միջև պայմանական իմաստի, ինչպես նաև դրա նրբերանգների ուսումնասիրությամբ: Մինչդեռ, պետք է նշել, որ տեքստի իմաստը համարժեք ընկալելու համար պետք է հաշվի առնել դրա և՛ ներակա, և՛ արտակա տարրերը՝ նախապատվություն չտալով դրանցից ոչ մեկին(2):

Սույն հոդվածում որպես հիմք ենք ընդունում Լ. Գ. Բրուսյանի [3,10] կողմից կատարված պայմանական ասույթների գործաբանական իմաստների երկու տեսակի տարբերակումը: Դրանք են.

I. Եղանակավորության վրա հիմնված գործաբանական իմաստներ:

II. Այլ բնույթի գործաբանական իմաստներ:

Վերլուծենք այս երկու տեսակներն ավելի մանրամասնորեն:

I. Եղանակավորության վրա հիմնված գործաբանական իմաստներ

Պայմանական ասույթների եղանակավորությունը, որը ուսումնասիրվում է ավանդական քերականություններում, հետևելով Լ.Գ. Բրուսյանին [3,10],

համարում ենք նշված ասույթների գործաբանության տեսակներից մեկը, քանի որ այստեղ կա արտահայտված փաստերի նկատմամբ խոսողի վերաբերմունքի չարտահայտված մակարդակ:

Եղանակավորության տեսանկյունից պայմանական ասույթները բաժանվում են երկու մեծ խմբի.

ա) *իրական պայմանի ասույթներ (conditio realis) և*

բ) *անիրական պայմանի ասույթներ:*

Վերջիններս բաժանվում են

ա) *հնարավոր պայմանի ասույթների (conditio potentialis) և*

բ) *ոչ-իրական պայմանի ասույթների (conditio irrealis):*

Այս տարբերակումն ընդունվում է հիմնականում բոլոր քերականների կողմից, չնայած պետք է նշել, որ որոշ դեպքերում լինում են նրբերանգների տարբերություններ:

Լ. Բարխուդարովը և Դ. Շտեյնզը [9] նշված հայեցակետից տարբերակում են 3 տեսակի պայմանական ասույթներ, որոնք արտահայտում են

ա) *իրական պայման, այսինքն՝ փաստ, որի գոյությունը շատ հնարավոր է,*

բ) *քիչ հնարավոր պայման (маловероятное условие), այսինքն՝ փաստ, որը միայն հավանական է, կասկածելի.*

գ) *անիրական պայման, այսինքն՝ փաստ, որը միայն երևակայական է, ոչ իրական:*

Ե. Գորդոնը և Ի. Կրիլովան [5] պայմանական ասույթները բաժանում են իրական և անիրական պայմանի ասույթների:

Ա. Թոմսոնը և Ա. Մարտինեն [8] տալիս են պայմանական ասույթների 3 տեսակ.

ա) *պայմանական ասույթների I տեսակ:*

Նախադասությունների այս տեսակը ներակայում է, որ երկրորդական նախադասության գործողությունը շատ հնարավոր է:

Օր. If the weather is fine the flight won't be cancelled.

բ) *պայմանական ասույթների II տեսակ:*

Այս տեսակը վերաբերում է ներկային կամ ապագային. իսկ երկրորդական նախադասության անցյալ ժամանակն իրական անցյալ չէ մատնանշում. այլ ըղծական, որը ցույց է տալիս փաստի անիրականությունը, անհնարությունը:

Օր. If I had a map I would lend it to you. (But I haven't a map)

Այստեղ երկրորդական նախադասության արտահայտած պայմանը և նրա հետևանքը, որն արտահայտված է գլխավոր նախադասությամբ, այս դեպքում վերաբերում է ներկային:

Օր. If someone tried to blackmail me I would tell the police. (But I don't expect that anyone will try to blackmail me).

Իսկ այս դեպքում երկրորդական նախադասության արտահայտած պայմանը վերաբերում է ապագային:

զ) պայմանական ասույթների III տեսակ:

Պայմանը չի կարող իրականանալ, քանի որ երկրորդական նախադասության գործողությունը չի կատարվել:

Օր. If you had worked a little bit more, you would have succeeded (but you didn't work, so you didn't succeed).

Ըստ Յ.Թոքմաջյանի [4], երկրորդական նախադասությունը կարող է արտահայտել իրական (իրագործելի) եւ անիրական (ցանկալի, ենթադրելի) պայման:

Լ.Աթեյներզը [7] տարբերակում է հավանական պայմանի ասույթներ (les e'ventuelles) եւ անիրական պայմանի ասույթներ (les irre'eles):

Վ.Առաքեյանը [1] առաջարկում է հետևյալ դասակարգումը.

ա) հնարավոր իրական պայման,

բ) հնարավոր ենթադրելի պայման:

Այժմ, հաշվի առնելով վերը նշված բնորոշումները, ավելի մանրամասնորեն ուսումնասիրենք պայմանական ասույթների եղանակավորության տարբերակները:

Իրական պայմանի ասույթներ

Ինչպես հայտնի է, իրական պայմանի ասույթներում գործածվում է սահմանական եղանակը: Սովորաբար այս ասույթները վերաբերում են

ապագային, այդ պատճառով էլ գլխավոր նախադասությունում գործածվում է ապառնի, իսկ երկրորդականում ներկա ժամանակը:

Իրական պայմանի նախադասությունները կարող են վերաբերել նաև ներկային կամ անցյալին, չնայած սա պատահում է ոչ շատ հաճախ: Այս գաղափարը հանդիպում է դասական քերականության մեջ, չնայած որոշ հեղինակներ ավելացնում են տարբեր նրբերանգներ:

Ըստ Լ.Բարխուդարովի և Դ.Շտեյնգի [9], պայմանական ասույթի երկրորդական նախադասության ստորոգյալը երբեմն դրվում է բայի ապառնի ժամանակով, եթե ապառնիին վերաբերող պայմանը թվում է քիչ հավանական, միայն ենթադրելի:

Չնայած վերը նշված հեղինակներն այս տեսակը համարում են իրական պայմանի տարբերակներից մեկը, մենք կարծում ենք, որ վերոհիշյալ ասույթները կարելի է դիտարկել որպես անիրական պայմանի տարբերակներից մեկը՝ որպես հավանական պայման՝ հաշվի առնելով դրանց ենթադրական իմաստը:

Ե.Գորդոնի և Ի.Կրիլովայի կարծիքով [5], իրական պայմանի ասույթներն արտահայտում են կանոնավոր տեղի ունեցող գործողություն:

Ինչպես երևում է Ա.Թոմսոնի եւ Ա.Մարտինեի վերը բերված պայմանական ասույթների առաջին տեսակի բնորոշումից [8], երկրորդական նախադասության գործողությունը շատ հնարավոր է:

Անիրական պայմանի ասույթներ

Ինչպես համառոտ նշվեց վերևում, անիրականությունն արտահայտող բոլոր ասույթները կարող են բաժանվել 2 խմբի.

ա) իրականությանը հակասող ասույթներ ,

բ) քիչ հավանական (problematic) գործողություն բնութագրող ասույթներ:

Ըստ Ե.Գորդոնի և Ի.Կրիլովայի [5], կա անիրականությունն արտահայտող երկու խումբ նախադասություններ.

1) դրանցից ոմանք գործողությունը ներկայացնում են որպես ենթադրական, այսինքն՝ երբ խոսողը չի իմանում՝ արդյոք գործողությունը տեղի կունենա՞, թե՞ ոչ, գործողության իրականացումը կասկածելի է, հարցական,

2) մյուսներն արտահայտում են գործողություն, որը հակասում է իրականությանը, այսինքն՝ գործողություն, որը չի կարող իրականացվել:

Այս կապակցությամբ Ա.Թոմսոնը եւ Ա.Մարտինեն [8] նշում են, որ պայմանական ասույթների II տեսակը վերաբերում է ներկային կամ ապառնիին, երկրորդական նախադասության անցյալ ժամանակն իսկական անցյալ չէ, այլ ըղծական, որը ցույց է տալիս անիրականություն կամ անհնարիություն: II տեսակը կիրառվում է.

ա) երբ ենթադրությունը հակասում է իրական փաստերին.

Օր. *If I were a bird, I would be the happiest creature in the world (but I am not a bird),*

բ) երբ մենք չենք սպասում, որ երկրորդական նախադասության գործողությունը տեղի կունենա.

Օր. *If he turned to doctor he would know his disease (but he doesn't intend to do that),*

գ) երբեմն II տեսակը կարող է կիրառվել որպես I տեսակի այլընտրանքային տարբերակ՝ արտահայտելու շատ հնարավոր ծրագրեր և առաջարկներ.

Օր. *Jane: We'll never type all these papers.*

John: *If we typed 5 pages a day we'd finish it in a week.*

կամ. *If we type 5 pages a day we'll finish it in a week.*

III տեսակի պայմանական ասույթների երկրորդական նախադասության բայ-ստորոգյալը արտահայտվում է սահմանական եղանակի Past Perfect ձևով: Գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը արտահայտվում է ստորադասական եղանակի վերլուծական ձևերով՝ should/would+perfect infinitive (I դեմք), would+perfect infinitive (II և III դեմքեր): Ժամանակն անցյալ է, և պայմանը չի կարող իրականանալ, քանի որ երկրորդական նախադասության գործողությունը չի կատարվել:

Օր. *If he had had a mind to make me a proposal to marry him, I would have accepted it (but he didn't do that).*

Այժմ քննարկենք անիրական պայմանի ասույթների տեսակներն ավելի մանրամասնորեն:

ա) Հնարավոր պայմանի ասույթներ
(*conditio potentialis*)

Այս տեսակի ասույթներում արտահայտված իրադրությունը կարող է իրականացվել:

Տարբեր հեղինակներ տարբեր եզրեր են կիրառում հավանական, կամ հնարավոր պայմանը բնութագրելու համար:

Լ.Բարխուդարովը և Դ.Շտեյնզը [9] օգտագործում են <маловероятное условие> (քիչ հավանական պայմանի ասույթներ) հասկացությունը:

Ե.Գորդոնը և Ի.Կրիլովան [5] նման գործողությունը նկարագրում են որպես ենթադրական, այսինքն՝ այսպիսի պայմանական ասույթների դեպքում խոսողը չգիտի՝ գործողությունը կկատարվի, թե ոչ, քանի որ գործողության իրականացումը կասկածելի է, հարցական:

Ա.Թոմսոնը և Ա.Մարտինեն [8] գործածում են <probability, possible plans and suggestions> (հավանականություն, հնարավոր ծրագրեր և առաջարկներ) եզրերը:

Նմանապես, ֆրանսերենում Ն.Ստեյնբերգը [7] այսպիսի պայմանը նկարագրում է որպես հավանական (e'ventuelle), որպես մի գործողություն, որը ենթադրվում է (suppose', hypothe'tique).

Ընդհանրացնելով բոլոր վերը նշված բնորոշումները՝ կարող ենք գալ եզրակացության, որ հնարավոր պայմանական ասույթների գործաբանական իմաստն այն է, որ խոսողը չգիտի՝ արդյոք իրադրությունն իրական է, թե ոչ: Դիտարկենք հետևյալ օրինակները.

Op. If she has returned from England, she will ring me up.

Այս ասույթում խոսողը ներակայորեն արտահայտում է այն միտքը, որ ինքը չգիտի՝ իրադրությունը համապատասխանում է իրականությանը, թե ոչ: Այս դեպքում կարող է լինել այլընտրանքային մեկ այլ ասույթ.

Op. If she hasn't returned from England, she won't ring me up.

բ) Ոչ-իրական պայմանի ասություններ
(conditio irrealis)

Այս տեսակի պայմանական ասություններում պայմանն իրականացված չէ և չի ել կարող իրականացված լինել:

Նման ասությունները բնութագրելու համար տարբեր հեղինակներ կիրառում են հետևյալ եզրերը՝ <contradicting reality> (իրականությանը հակասող) [5], <supposition is contrary to known facts> (ենթադրությունը հակասում է հայտնի փաստերին) [8], <counterfactuals> (փաստերին հակասող) [6] եւ այլն:

Կարելի է եզրակացնել, որ ոչ-իրական պայմանի ասություններում ներակա ծնով արտահայտված է իրական աշխարհում ասության սխալ լինելու մասին գործաբանական տեղեկություն (Տես այդ մասին Լ. Գ. Բրուտյան, 1992):

Օր. If I were a boy I would have been very gentle with girls. (But I am not a boy« it is contrary to known facts).

Ինչպես նշել էինք, պայմանական ասությունների գործաբանության վերը քննարկվող տեսակը, այսինքն՝ եղանակավորության վրա հիմնված գործաբանությունը, կարող է հավելվել այլ տեսակի գործաբանական իմաստներով:

2. Այլ բնույթի գործաբանական իմաստներ

Հիմք ընդունելով Ա.Թոմսոնի և Ա.Մարտինեի [8] կողմից ուսումնասիրված պայմանական ասությունների հիմնական կառույցների տարբերակները՝ կարող ենք վերհանել հետևյալ գործաբանական իմաստները.

ա) if+present+may/might(possibility).

Այստեղ կարելի է վերհանել հնարավորության ներակա գործաբանական իմաստը:

Օր. If they decide to start on a trip, I may/might accompany them(perhaps I'll accompany them)

բ) if+present+may(permission) or can(ability).

Այս կառույցի դեպքում կարելի է խոսել թույլտվության կամ կարողության գործաբանական իմաստի մասին:

Op. If you've finished your work you may go home(permission).

գ) if+present+ must, should կամ հրամանի, խնդրանքի, խորհրդի այլ արտահայտություններ, որտեղ նշված իմաստները կարող են համարվել հավելյալ գործաբանական իմաստներ:

Op. If you go out, could you bring me some cigarettes? (request).

If you want to be healthy, you should do exercises every morning(advice).

Թոմսոնի և Մարտինեի [8] կողմից առաջարկված դասակարգման վերը նշված II տեսակի պայմանական ասությունում կարող են լինել տարատեսակներ, երբ would-ի փոխարեն գործածվում են might կամ could եղանակավորող բայերը՝ արտակայելով համոզվածության, հնարավորության եւ թույլտվության գործաբանական իմաստները:

Op.

ա) If I know a foreign language, I could find a job easier(ability).

բ) If you worked hard, you might pass the exam (possible result).

գ) If you worked hard, you would pass the exam (certain result).

Սովորաբար ընդունված է, որ երկրորդական նախադասությունում չեն գործածվում will/would կամ shall/should օժանդակ բայերը: Սակայն կան բացառություններ, ու Թոմսոնը և Մարտինեն [8] քննարկում են երկրորդական նախադասությունում այս օժանդակ բայերի հատուկ կիրառումները:

ա) If you will/would կառույցը հաճախ գործածվում է խնդրանք արտահայտելու համար: Would-ը ավելի քաղաքավարի ձև է:

If you will/would+infinitive կառույցը հաճախ գործածվում է առանձին, երբ խնդրանքը բխում է հանգամանքներից: Խոսողը գիտի, որ լսողը այն կհասկանա՝ հանգամանքներից ելնելով:

բ) If+will/would կառույցը կարող է գործածվել բոլոր դեմքերի համար՝ մատնանշելով ցանկություն: Won't ժխտական ձևի կիրառումը այս դեպքում կարող է նշանակել «մերժում»:

գ) Will-ը կարող է կիրառվել՝ արտահայտելով պնդում:

դ) If+would like/care կառույցը կարող է գործածվել if+want/wish կառույցի փոխարեն: Առաջինը ավելի քաղաքավարի ձև է:

ե) If+should-ը կարող է մատնանշել այնպիսի գործողություն, որը հնարավոր է, բայց ոչ շատ հավանական:

Should-ը կարող է լինել նախադասության սկզբում, իսկ if շաղկապը՝ զեղչվի:

զ) If I were you I should/would... կառույցը խորհուրդ արտահայտելու մի ձև է:

Եթե մենք քննարկենք այս դեպքերը ավելի մանրամասնորեն, կարող ենք վերհանել խնդրանքի, ցանկության, մերժումի, պնդման, քիչ հնարավորության, խորհրդի գործաբանական իմաստները:

Բերենք օրինակներ յուրաքանչյուր դեպքի համար.

ա) If you will/would come a little bit later I'll be at your disposal(request).= Please come later.

բ) If Ann will turn to me for advice, I'll help her by all means(willingness).= If Ann is willing to turn.....

If Ann won't turn to me for advice, I can't help her(refusal).= If Ann is unwilling to turn to me / if she refuses to turn.....

գ) If you will continue to do your work like this, you won't succeed(obstinate insistence).= If you insist on continuing like this.....

դ) If he'd like to come we'll make an appointment for him= If he wants/wishes to come.....(willingness).

ե) If these biscuits should arrive in a damaged condition, please inform the factory at once (not very likely possibility).

զ) If I were you I should/ would turn to a doctor (advice).

Ահա այսպիսին էր պայմանական ասույթների վերլուծությունը գործաբանության տեսանկյունից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վ. Դ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր II, Երևան, 1964, էջ 218:
2. Գ. Ա. Բրուտյան, Մեզաքաղաքում, «Սովետական գրականություն», 1985, թիվ 2, էջ 20:
3. Լ.Գ. Բրուտյան, Բարդ ասույթների գործաբանական իմաստների վերլուծության շուրջ, Բանբեր Երևանի համալ-սարանի, N 2, 1996, էջ 171:
4. Հ. Ա. Թոքմաջյան, Ժամանակակից անգլերենի քերականություն, Երևան, Փյունիկ, 1995, էջ 220:
5. E. M. Gordon., I. P Krylova., A grammar of present-day English (parts of speech), Moscow: Higher School Publishing House, 1994, pp 150-152.
6. R. C. Stalnaker, Pragmatics - In: Semantics of Natural language. D. Davidson (ed.), 1972, p 383.
7. N. Steinberg, Grammaire francaise, Leningrad, 1972, p 194.
8. A. J. Thomson, A. V. Martinet, A practical English grammar. Third Edition, Oxford University Press, 1980, pp 186-192.
9. Л.С. Бархударов, Д. А Штелинг., Грамматика английского языка, издательство Высшая школа, Москва, 1973, стр 79.
10. Լ. Գ. Բրտյան, Анализ языковых выражений импликации, Ереван, АОУ, 1992.